ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 175 ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1987 թ. հունիսի 17—18-ին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեգյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ ականավոր հրապարակախոս և գիտնական Ստ. Նազարյանի ծննդյան 175 ամյակին։

Բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը։ Նա մասնավորապես նշեց, որ Ստ. Նազարյանի անունն անխզելիորեն կապված է անցյալ դարի 50—60-ական թվականների հետ, որն իրավամբ համարվում է ազգային զարթոնքի կամ վերածնության ժամանակաշրջան։ Այդ տարիներին սկսվեց հայ նոր գրականության, մամուլի և հրապարակախոսության ամենից արդյունավետ զարգացման շրջանը։ Նազարյանը եղավ այդ բեկման դարաշրջանի խոշորագույն գործիչներից մեկը, որը վիթխարի դեր է խաղացել մեր նոր գրական լեզվի և գրականության, կյանքի և մշակույթի նեղատմամբ առաջադիմական հայացքների հաղթանակի գործում։ Նրա «օրերի և վաստակների» լավագույն և ամենաբարձր արտահայտությունը եղավ 1858—1864 թթ. «Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակությունը, որն անշնչելի հետք թողեց հայ մտավոր կյանքի բոլոր մարզերում։ «Հյուսիսափայլի» խմբագիրն իր գլխավոր աշխատակցի՝ Նալբանդյանի հետ կարճ ժամանակում հսկայական գործ կատարեց հայ ամբողջ հասարակական և մտավոր կյանքի վերանորոգման համար։

Վերջում Է. Ջրբաշյանը խոսեց նաև Նազարյանի գրական ժառանգությունը հրատարակելու և ուսումնասիրելու ուղղությամբ կատարված աշխատանքների մասին։ Նա շեշտեց, որ Նազարյանի ամբողջ գործունեությունը ներշնչված էր հայրենասիրական ազնիվ նվիրումով, և նրա կյանքն ու գործը հարազատ ժողովրդին ու մշակույթին անձնվիրաբար ծառայելու գեղեցիկ օրինակ է։

«Նազարյանի գերմաներեն ինքնակենսագրությունը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գիոռ Հաճոբյանը, որը նախ հրատարակեց այդ ուշագրավ վավերագիրը (հայերեն թարգմանությամբ), ապա բնութագրեց միջավայրն ու հանգամանքները, որոնք կյանքի են կոչել Նազարյանի այս առաջին կենսագրությունը։ Իր իսկ վկայությամբ Նազարյանը 1814 թ. ծնունդ է։ Նա ազգային լուսավորության գործին նվիրվելու գաղափարով տարված է եղել գեռ Թիֆլիսում ուսանելու տարիներին, և Դորպատ գալու պատճառը եղել են Խաչատուր Աբովյանի նամակներն ու հորդորները։ Նազարյանի ճակատագրի մեջ Աբովյանի խաղացած բախտորոշ դերը առանձնապես ընդգծվում է Դորպատի ուսումնական շրջանի հոգաբարձու Կրաֆստրոմի 1836 թ. հոկտեմբերի 2-ի և Ռուսաստանի հանրային կրթության մինիստր Ս. Ուվարովի՝ Նազարյանին պետական թոշակ տալու մասին զեկուցագրերում, որոնց այնուհետև ծանոթանում է Նիկոլայ I-ը և իր համաձայնությունը տալիս՝ հայ ժողովրդի համար ուսուցիչ պատրաստելու նպատակով պետական գանձարանից Նազարյանին տրամադրելու տարեկան 500 ռ. թոշակ։ Այս վավերագրերը հերքում են այն անհող հայտարարությունները, թե իբր դորպատյան տարիներին Աբովյանը ենթարկվել է պետական հալածանքի։ Ռուսական տերությունը նման անձի ձեռնարկումը չէր կարող խրախուսել։ Զեկուցողն անդրադարձավ նաև Նազարյանին ուղղված Աբովյանի նամակներին, որոնք, դժբախտաբար, չհրատարակվեցին և կորան անհայտ իրադարձություններում։ Հմայված լինելով Աբովյանի անձով, Նազարյանը, այնուամենայնիվ, չէր բաժանում աշխարհարարի մշակման Աբովյանի սկզբունքներն ու փորձը, հետևաբար Աբովյանի՝ իր տրամադրության տակ եղած երկերից նա ոչ մի տող չհրատարակեց։

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Դարոնյանը հանդես եկավ «Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի փոխհարաբերության հարցերից» զեկուցմամբ։ Շեշտելով այն հանգամանքը, որ Նազարյանի և Նալբանդյանի փոխհարաբերությունները ճիշտ ըմբռնելու համար պետք է ելնել նրանց ապրած դարաշրջանից, հստակ պատկերացնելով անցյալ դարի 50—60-ական թվականների հայ իրականությունը, ուր նրանք ապրել և գործել են, զեկուցողը հանգամանորեն և նորովի լուսաբանեց երկու մեծ մտածողների գրական-հասարակական առնչություններին ու համագործակցությանը վերաբերող հարցերը։

«Հայագիտական հարցադրումները Ս. Նազարյանի աշխատություններում և ռուս գրականագիտական միտքը 1840-ական թվականներին»

թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Էդուարդ Հակոբյանը։ Խոսելով այն մասին, որ մինչև XIX դ. 40-ական թվականները հայագիտության ասպարեզում Ռուսաստանում քիչ բան էր արված, նա ընդգծեց, որ Նազարյանը գրեթե միակ հայագետն էր Ռուսաստանում, որը հայոց լեզվի, գրականության և հայ ժողովրդի լուսավորության հարցերի ուսումնասիրությունը դրեց գիտական հիմքերի վրա։ Նազարյանը գտնում էր, որ հայագիտությունը առաջին հերթին կոչված է հետազոտելու հայ ժողովրդի պատմությունը։ 40-ական թվականներին գրած իր գործերում («Ակնարկ Հայկազյան գրականության պատմության, մինչև 13-րդ դարի վերջը», «Հայ գրականության նոր ժամանակների պատմության ուրվագծեր») և նամակներում նա պնդում էր, որ հայերը պետք է իմանան իրենց փառավոր անցյալը, խորապես ուսումնասիրեն լեզուն և գրականությունը։ Բարձր գնահատելով միջնադարյան հայ հեղինակների գործերը, Նազարյանը գտնում էր, որ միայն Խորենացու «Հայոց պատմությունն» ու Անիի հոյակապ կոթողների ավերակներն արդեն խոսում են հայ ժողովրդի դասական ճաշակի մասին։ Անդրադառնալով հին և միջնադարյան գրականությանը, նշեց զեկուցողը, Նազարյանը, այնուամենայնիվ, չէր շեղվում ժամանակի սուր հարցերից, այլ դրանք գիտում էր ազգային լուսավորության հրատապ խնդիրների լույսի տակ։

Նազարյանի մանկավարժական գործունեությանն էր նվիրված մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թարգամ Ջուհարյանը «Ս. Նազարյանի մանկավարժական հայացքները» զեկուցումը։ Թ. Ջուհարյանը առանձնապես նշեց, որ Նազարյանը մեծապես նպաստել է հայ մանկավարժական մտքի զարգացմանը՝ անդրադառնալով լուսավորության, կրթության, դաստիարակության այն բոլոր հարցերին, որոնք հուզել են իր ժամանակակիցներին, և որոնցից շատերը այնքան հիմնավոր են լուսաբանվել, որ մինչև այժմ պահպանում են իրենց կենսունակությունը։ Ջտնասիրությամբ ուսումնասիրելով մանկավարժության տեսության և պատմության հարցերը, Նազարյանը գրում է ոչ միայն դասագրքեր և ձեռնարկներ, այլև հեղինակում է մի շարք աշխատություններ («Միջին դարու կրթության պատմություն», «Առաջին երեխայական տարիների խորհուրդը», «Առտնին դաստիարակության մասին», «Պատմություն կրթության նորագույն ժամանակի՝ մինչև սկիզբը 19-րդ դարի»), որոնք լույս են տեսել «Հյուսիսափայլի» էջերում։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մարգո Մխիթարյանի զեկուցումը՝ «Ս. Նազարյանի մղած գրական բանավեճերի պատմությունից», նվիրված էր լուսավորական-դեմոկրատական ուղղության շատագով «Հյուսիսափայլի» և կղերաֆեոդալական հոսանքի օրգաններ «Մեղու Հայաստանի», «Ճոռաքաղ», «Մասյաց աղավնի» պարբերաթերթերի միջև մղված գրական-գաղափարական բանավեճերին։ Զեկուցողը նշեց, որ 60-ական թվականների այդ բանավեճերը հաճախ հեռանում էին հրապարակախոսական ազնիվ պայքարի միջոցներից, տեղը զիջելով սխոլաստիկ վեճերի և կրոնական դոգմայի պարտադրող ժամանակավրեպ պահանջներին։ Չնայած Նազարյանի համար ստեղծված բարոյական և նյութական ծանր պայմաններին, հրապարակախոսին հաջողվեց պատասխանել ժամանակի առաջադրած հրատապ խնդիրներին։ Նա մշակեց գրական աշխարհարարը, սկզբնավորեց աշխարհիկ գրականությունը՝ պայքարելով ազգային կյանքի բուն զարթոնքի, հայ ժողովրդի մտավոր վերածնության համար։

«Ստեփանոս Նազարյանը՝ ե 1840-ական թթ. հայ լուսավորական գործիչները» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նաեմյանը։ 1830-ական թվականներին հայրենասիրական նորահաս գաղափարներով տոգորված Մ. Թաղիադյանը, Խ. Աբովյանը, Ս. Նազարյանը՝ հոգևոր շարժման այդ առաջյալները, ասաց Ռ. Նանումյանը, նոր կյանքի են կոչում հայությանը, ազդարարում ազգային լուսավորական զարթոնքն ու վերածնությունն առաջ մղող գաղափարներ։ Նազարյանի և նրա համախոհների լուսավորական-դեմոկրատական գաղափարները, ուր արտացոլվում էին նրանց հակակղերական և հակաֆեոդալական հայացքները, աշխարհաբար լեզվի քաղաքացիական իրավունքը նվաճելու պահանջը, ազգային գրականությունը աշխարհականացնելու և եվրոպական լուսավորությամբ «հայության խավարը» փարատելու ձգտումը, խորացան և լայն տարածում գտան 1850—1860-ական թվականների հայ վերածնության մեջ, նոր հիմքեր ստեղծելով հաջորդ տասնամյակների լուսավորական վերելքի համար։

Ստեփանոս Նազարյանի ծննդյան 175 ամյակին նվիրված գիտական նստաշրջանը լավագույն առիթ հանդիսացավ՝ արժանին մատուցելու այն մեծ ծառայություններին, որ նա ունի հայ գրականագիտության, լեզվաբանության, պարբերական մամուլի և դրականության, հասարակական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ։

ՄԱԳԴԱԼԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԵԼԱՆԻԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ